# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 10-Ն

26 ՄԱՐՏԻ 2015թվականի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 62-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերի դրույթներով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> 33-րդ հոդվածի 4-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 10-ի 234-Ն որոշմամբ

**<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է</u>**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2015 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 62-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

### ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

1. «Ընդամենը եկամուտներ» տողի <<148087.6>> թիվը փոխարինել <<147719.2>> թվով.
   այդ թվում՝
   1) Բյուջեի վարչական մասի եկամտային մասի 7331 հոդվածի՝ «Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ» տողի <<16015.4>> թիվը փոխարինել <<16013.0>> թվով:
   2) Բյուջեի եկամտային մասի 7421 հոդվածի «Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ» տողի <<5708.9>> թիվը փոխարինել <<5342.9>> թվով:

### ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

2. Բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման «ընդամենը ծախսեր» տողի «ընդամենը» սյունակի <<150086.8>> թիվը փոխարինել <<149718.4>> թվով.
   այդ թվում
   1) Բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման «ընդամենը ծախսեր» տողի «վարչական մաս» սյունակի <<148087.6>> թիվը փոխարինել <<147719.2>> թվով.
   ա. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 01, խումբ 3, դաս 3 ((ընդհանուր բնույթի այլ ծառայություններ (Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային

բաժնի պահպանման ծախսեր)) և տնտեսագիտական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի <<5072.9>> թիվը փոխարինել <<4706.9>> թվով:

բ . Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 01, խումբ 6, դաս 1 (ընդհանուր բնույթիա հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածից <<100.0>> հազ. դրամ դրամաշնորհային գումար հատկացնել <<Աջակցություն Շիրակի մարզի համայնքներին>> հիմնադրամին՝ բարեգործական նպատակներով:

գ. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 (պահուստային ֆոնդ) և տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածի <<6871.9>> թիվը փոխարինել <<6469.5>> թվով:

դ. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 7, դաս 1 (սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերի չպատկանող)) և տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածի <<700.0>> թիվը փոխարինել <<850.0>> թվով:

ե. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 09, խումբ 1, դաս 1 (նախադպրոցական կրթություն) և տնտեսագիտական դասակարգման 4216 (գույքի և սարքավորումների վարձակալություն) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<100.0>> թվով:

զ. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 05, խումբ 6, դաս 1 (շրջակա միջավայրի պաշտպանություն) և տնտեսագիտական դասակարգման 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<150.0>> թվով:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՍ

2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ՄԱԿԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ

6. ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

7. ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 11

26 ՄԱՐՏԻ 2015թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 41 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<ա>> ենթակետով

**<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.</u>**

Ելնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքապետարանի աշխատանքների կազմակերպման անհրաժեշտությունից և քաղաքապետարանի ենթակառուցվածքների զարգացումից՝ ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի սեպտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին>> N 41 որոշումը, համաձայն որի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքապետարանի թիվ 1 վարչական շենքի 1-ին հարկի ձախակողմյան հատվածի չվերանորոգված տարածքը 231.6 քառակուսի մետր մակերեսով տրամադրվելու էր Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՍ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱԿԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ
6. ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 12

26 ՄԱՐՏԻ 2015թվականի

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2002 թվականի դեկտեմբերի 26-ի <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի <<Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 822-Ն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետի և 5-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Մարալիկ քաղաքի Թումանյան փողոցի տուն 2 հասցեի բնակչուհի Աիդա Էֆիկի Գալստյանի (սոցիալական ապահովության քարտ՝ 6610670137) 2015 թվականի մարտի 24-ի դիմումն և Մարալիկի քաղաքապետի 2015 թվականի մարտի 25-ի եզրակացությունը.

**<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.</u>**

Մարալիկ քաղաքի Թումանյան փողոցի տուն 2 հասցեի բնակչուհի Աիդա Էլֆիկի Գալստյանի (սոցիալական ապահովության քարտ՝ 6610670137), անվամբ Մարալիկի քաղաքապետարանում հաշվառված JEEP GRAND CHEROKE 4.0 I LIMITED (14LU355 պ/հ, 1996թ.) տրանսպորտային միջոցի ունեցած 296267 դրամ պարտքի նկատմամբ սահմանել գույքահարկի գծով արտոնություն, որից 155500 դրամը ապառք է, 140767 դրամը՝ տույժ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՍ
2. ԹԱԴԵՒՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱԿԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ
6. ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 13

26 ՄԱՐՏԻ 2015թվականի

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին տրամադրել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26 -Ի ԹԻՎ 13 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Անուն, ազգանուն | Գումարի չափ |
|---|---|---|
| 1. | Եղիազարյան Ռազմիկ Ավետիսի<br>AM 0899247 | 10000 (տաս հազար) դրամ |
| 2. | Գալստյան Հովհաննես Խաչիկի<br>AM 0351792 | 10000 (տաս հազար) դրամ |
| 3. | Մխիթարյան Հայաստան Գարեգինի<br>AN 0207296 | 10000 (տաս հազար) դրամ |
| 4. | Մկրտչյան Վարդանուշ Արտուշի<br>AM 0883215 | 10000 (տաս հազար) դրամ |
| 5. | Գյուլբեկյան Հերմինե Հրանդի<br>AN 0280203 | 10000 (տաս հազար) դրամ |
| 6. | Վարդանյան Քնարիկ Աղվանի<br>AM 0779742 | 10000 (տաս հազար) դրամ |
| 7. | Ղազարյան Պարիսպան Արարատի<br>AN 0261837 | 10000 (տաս հազար) դրամ |
| 8. | Բաղդասարյան Լարիսա Շախնազարի<br>AN 0403249 | 10000 (տաս հազար) դրամ |
| 9. | Պետրոսյան Տիգրան<br>AN 0564920 | 10000 (տաս հազար) դրամ |
| 10. | Անանիկյան Հասմիկ Ալեքսանի<br>AN 0249102 | 10000 (տաս հազար) դրամ |
| 11. | Խաչատրյան Անի Սլավիկի<br>AF 0346020 | 20000 (քսան հազար) դրամ |
| 12. | Քոչարյան Արթուր Լաստոնի<br>AM 0794498 | 10000 (տաս հազար) դրամ |
| 13. | Հունանյան Հայկ Ալբերտի<br>3311820703 | 10000 (տաս հազար) դրամ |
| 14. | Սարգսյան Բուրաստան Ռազմիկի<br>AE 0523848 | 10000 (տաս հազար) դրամ |
| 15. | Մարտիրոսյան Օֆիկ Արսենի<br>5303500020 | 10000 (տաս հազար) դրամ |
| 16. | Պետրոսյան Արտաշես Ռաֆիկի<br>AM 0279498 | 10000 (տաս հազար) դրամ |
| 17. | Էլամիրյան Ջուլետա Մեսրոպի<br>AN 0362703 | 10000 (տաս հազար) դրամ |
| 18. | Մանուկյան Հայաստան Արտեմի<br>AK 0297454 | 10000 (տաս հազար) դրամ |
| 19. | Եվանգուլյան Աստղիկ Դավիդի<br>5708710373 | 10000 (տաս հազար) դրամ |
| 20. | Ավետիսյան Լուսինե Արծրունի<br>AH 0317289 | 10000 (տաս հազար) դրամ |
| 21. | Փիլիպոսյան Ռոբերտ Աշոտի<br>AN 0397511 | 10000 (տաս հազար) դրամ |
| 22. | Կարապետյան Ասյա Հովհաննեսի<br>AF 0323281 | 10000 (տաս հազար) դրամ |
| 23. | Մխիթարյան Յուրիկ<br>AK 0291550 | 50000 (հիսուն հազար) դրամ |
| 24. | Սուքիասյան Անդրանիկ Արթուրի<br>AK 0366420 | 10000 (տաս հազար) դրամ |
| 25. | Ալավերդյան Անժելա Եփրեմի<br>004652400 | 10000 (տաս հազար) դրամ |
|  | **Ընդամենը** | **300000 (երեք հարյուր հազար) դրամ** |